

**ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶՅԱՆԸ՝ ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻԱՅԱՆԻ
ԳՆԱՀԱՏՄԱՄԲ***

*Անունդ գաշխարհ լնոյր դըպրութեան
Էիր Մենտոր, Մուսայ դու նոր սերընդեան...*
Ե. Տ.

Բանալի բառեր – Թովմաս Թերզյան, Եղիա Տեմիրճիայան, ուսուցիչ, աշակերտ, բանախոս, բանաստեղծ:

XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ նշանավոր բանաստեղծ, դրամատուրգ, գեղագետ, թարգմանիչ Թովմաս Թերզյանը (1840–1909) մի քանի տասնամյակի բեղմնավոր մանկավարժական գործունեության ընթացքում աճեցրել է ապագա նույնքան անվանի ազգային գրական, կրթական-մշակութային գործիչներ: Նրանցից մեկն էր տաղանդաշատ գրող, հրապարակագիր, խմբագիր ու մանկավարժ Եղիա Տեմիրճիայանը (1851–1908), որը միշտ էլ մեծագույն ակնածանքով է հիշատակել ու արտահայտվել իր սիրելի ուսուցչի մասին: 1880-ական թվականներին իր խմբագրած «Գրական եւ Իմաստասիրական Շարժում», «Երկրագունտ» հանդեսներում, Կ. Պոլսի այլ պարբերականներում լրագրողական հրապարակումներով նա անդրադարձել է Թ. Թերզյանի մանկավարժական գործունեության, բանախոսության արվեստի, բանաստեղծական տաղանդի գնահատությանը: Հայ գրականության երկու ինքնատիպ դեմքերի միջև փոխադարձ առնչություններն իրականացվել են նաև տարբեր առիթներով միմյանց ձոնված բանաստեղծությունների միջոցով:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 09.02.2025 թ.:
Ուղարկվել է գրախոսության 20.06.2025 թ.:

Petros Demirchyan
Doctor of Philology
Institute of Literature after M. Abeghyan of NAS RA
ORCID ID: 0009-0003-6265-1421
pdemirchyan@mail.ru

TOVMAS TERZIAN, WITH THE APPRECIATION OF YEGHIA TEMIRCHIPASHIAN

Keywords: *Tovmas Terzian, Yeghia Temirchipashyan, teacher, student, speaker, poet.*

Tovmas Terzian (1840–1909), a prominent Western Armenian poet, playwright, aesthetician, and translator of the second half of the 19th century, raised future equally renowned national literary, educational, and cultural figures during several decades of fruitful pedagogical activity. One of them was the talented writer, publicist, editor, and educator Yeghia Temirchipashyan (1851–1908), who always remembered and spoke about his beloved teacher with the greatest reverence. In the 1880s, in the journals he edited, “Literary and Philosophical Movement”, “Earthly Scientist”, and other periodicals in Constantinople, he reflected on the appreciation of T. Terzian’s pedagogical activities, oratory, and poetic talent. The mutual relations between the two unique figures of Armenian literature were also realized through poems dedicated to each other on various occasions.

Петрос Демирчян
Доктор филологических наук
Институт литературы имени М. Абега НАН РА
ORCID ID: 0009-0003-6265-1421
pdemirchyan@mail.ru

ТОМАС ТЕРЗЯН, ПО ОЦЕНКЕ ЕГИИ ТЕМИРЧИПАШЯНА

Ключевые слова: *Товмас Терзян, Егия Темирчипашян, учитель, ученик, оратор, поэт.*

Выдающийся западноармянский поэт, драматург, эстетик и переводчик второй половины XIX века Товмас Терзян (1840–1909) за несколько десятилетий плодотворной педагогической деятельности воспитал будущих не менее известных деятелей национальной литературы, образования и культуры. Одним из них был талантливый писатель, публицист, редактор и педагог Егия Темирчипашян (1851–1908), который всегда с величайшим почтением вспоминал и выразился о своем любимом учителе. В 1880-х годах в редактируемых им журналах «Гракан ев Имасасиракан Шаржум» («Литературно-философское движение») и «Еркрагунт» («Земной шар»), а также в других константинопольских периодических изданиях он размышлял о высокой оценке педагогической деятельности, ораторского искусства и поэтического таланта Т. Терзяна. Взаимоотношения двух само-

бытных деятелей армянской литературы реализовывались также через стихотворения, посвященные друг другу по различным поводам.

Ներածություն

XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ անվանի բանաստեղծ, դրամատուրգ, գեղեցկագետ, թարգմանիչ Թովմաս Թերգյանը նույնքան սիրված ու գնահատված էր նաև որպես մանկավարժ: Վենետիկի Մուրատ-Ռաֆայելյան վարժարանն ավարտելուց հետո՝ 1858-ին վերադառնալով Կ. Պոլիս, նա նվիրվում է համբավվոր այդ կրթօջախում իր մեծանուն ուսուցիչների՝ Ղևոնդ Ալիշանի, Արսեն Բագրատունու, Էդուարդ Հյուրմյուզյանի և այլոց հոգատար դեկավարության ներքո ձեռք բերած եվրոպական մտքի առաջավոր փորձը հայոց սերունդներին փոխանցելու գործին: Սկսելով ընտանեկան դասատվություններից՝ հետագա մի քանի տասնամյակի ընթացքում Թերգյանը հայերեն, ֆրանսերեն, գրականություն ու գեղեցկագիտություն է դասավանդել Կ. Պոլսի հայկական և պետական տարբեր վարժարաններում, իսկ 1886-ին՝ Կեդրոնական վարժարանի բացումից հետո, նաև այդ կարևոր ուսումնական հաստատությունում: Նրա հոգատար հայացքի, մտքի և հոգու ազդեցության ներքո աճել են ավելի ուշ նույնպես մեծ համբավի արժանացած այնպիսի դեմքեր, ինչպիսիք էին Գր. Զոհրապը, Մ. Չերազը, Ռ. Պերպերյանը, Տ. Արփիարյանը, Ա. Չոպանյանը և ուրիշներ, որոնք գնահատության ու ակնածանքի բազմաթիվ տողեր են նվիրել իրենց ականավոր ուսուցչին: Թ. Թերգյանի տաղանդավոր սաների այդ շարքում իր պատվավոր տեղն ունի նաև Եղիա Տեմիրճիպաշյանը:

Ուսուցիչը

Թովմաս Թերգյանի հետ Եղիայի առաջին հանդիպումը տեղի է ունեցել 1860-ական թթ. Կեսերին՝ Հասցյուղի Ներսեսյան վարժարանում սովորելու տարիներին, որտեղ նրա դասընկերներն էին նաև Մինաս Չերազն ու Ռեթեոս Պերպերյանը, իսկ ուսուցիչները՝ Թ. Թերգյանն ու լեզվաբան Մատթիա Գարագաշյանը: Մեծանուն այս մանկավարժների շնորհիվ Ե. Տեմիրճիպաշյանը կատարելապես տիրապետում է գրաբարին, հայ ու համաշխարհային դասական գրականությանն ու մշակույթին: Հենց սկզբից պատանի Եղիայի վրա մեծ տպավորություն էր գործել Թերգյանի արտաքինը, որն անջնջելի մնաց նրա հիշողության մեջ ամբողջ կյանքում, նաև գիտելիքների հարստությունը, բանախոսելու ոճն ու հմտությունը: Այդ ամենի վերաբերյալ իր վերաբերմունքն ու գնահատականները Ե. Տեմիրճիպաշյանն արտահայտել է տարիներ անց՝ 1885 թ., «Առ Թովմաս Էֆենտի Թերգեան» հայտնի քերթվածում, որը գրել էր նրա՝ Օսմանիյե պատվան-

շանին արժանանալու առթիվ: «Փոքր ինչ կըքէր հասակդ՝ հանգոյն անցելոյն...» հիշատակում է Եղիան, ապա նկարագրում «պայծառ ճակատ»-ը, «երկայն գիսակ»-ը հողմածուփ, որին հաջորդում են հիացմունքի ու ակնածանքի տողերը.

... Էի՞ր տիպար Ռաճայելայ քաղցր ու սուրբ

Ա՛յն պատկերաց յորս հիանամք յաւիտեան:

Երբ խօսէիր, թուէիր անհուն վեհ մատեան (Գրասէր, 1885: 332):

Բայց դա դեռ բավարար չէր: Թերզյանն այն ինքնատիպ դեմքն էր, որն առավել սիրելի էր իրենց, քանզի «քերթողաց Հայոց արդեաց հայրն»՝ Դևոնդ Ալիշանն էր եղել նրա սիրտն ու միտքը կոփող դաստիարակը, նրա «դիցական շուրթք» էին համբուրել իր տաղանդավոր սանի ճակատը: Եվ հիմա, երբ, թվում էր, լռել է մեծանուն ուսուցչի ու բանաստեղծի ձայնը, «Ո՛ւր ես,- բացականչում է Եղիան,- Անունդ գաշխարհ լնոյր դրպրութեան. // Էիր Մենտոր, Մուսայ դու նոր սերընդեան. // Յադրիականն ալեաց մինչ յեզր Պոսֆորին, // Հընչէր քընարդ՝ դուստր հարագատ Պինդարին»:

Քերթվածը բնորոշ է նաև նրանով, որ Ե. Տեմիրճիպաշյանը, մի քանի այլ սերնդակիցների նման, փորձում է որոշարկել Թովմաս Թերզյանի տեղը հայոց մտավոր-գեղարվեստական կյանքի զարգացումների մեջ: Ըստ նրա՝ Մկրտիչ Պեշկեթաշյանից հետո, «կուսանց, պատանեաց» հայացքները դարձել են դեպի նա, ով այլևս վարպետն էր «այնքանեաց»: Այդպես, ըստ Եղիայի, հաստատուն կանգնած է Թ. Թերզյանը երկու հսկաների՝ մութ, «այլ խոր, ճոխ» անցյալի ու թեև «աղօտ», բայց «առատ» շողերով հղի ապագայի միջև, որպես յուրատեսակ կամուրջ, Եղիայի դիպուկ բնորոշմամբ՝ «Դու՝ գիծ միութեան գերակայ»: Ու թեև այժմ գրեթե չի երևում հանրության մեջ ու այլևս «անմատոյց» է իր սաներին, բայց դա ամենևին խոչընդոտ չէ իրեն, քանզի «գըտցէ տաղս ըզքեզ ի շքեղ քոյին խուց», նրան մատուցելու համար իր հիացումը, «թափանցիչ» տրտունջներն ու «զխընդակցութիւնս ի սրտէ՝ Վասն ընծայեալ քեզ պատուոյն Աւգոստէ» (Գրասէր, 1885: 332-333):

Հիշյալ քերթվածի առիթով Վենետիկի Մխիթարյան ճանաչված հայրերից, գրող, բանասեր Սիմեոն Երեմյանը (Հ. Սիմէր) Ե. Տեմիրճիպաշյանին նվիրված իր ուսումնասիրության մեջ հետևյալ գնահատականն է տալիս. «Թովմաս Թերզեան՝ Պօլիս պետական վարժարանաց մէջ արդիւնք ունենալով, Համիտէն Օսմանիյէ պատուանշանին կ'արժանանայ, այդ առթիւ Ե. Տեմիրճիպաշեան *Առ Թովմաս Էֆէնտի Թերզեան* քերթուած մը կը գրէ, հոն կ'ուրուագրէ վարժապետ քերթողին հոգեկան կարողութիւնը: Նախանձի խնդիր չկայ. գովեստ առնողն ալ և տուողն ալ հաւասարապէս քնարասէր սիրուած գրական գործիչներ են: Տեմիրճիպաշեան գրա-

գիտական անելի գործունեությունն է ունեցած, և սակայն Թերզեանի վրայ կը հիանայ: Տգեւները միայն հիացում չունին, իրենց անպատուություն կը համարին ուրիշին գովեստ տալը և գովելին գովելը: Քերթողը՝ զայն սիրելու համար, ունի ուրիշ պատճառ, զի Թերզեան Ալիշանին աշակերտած է: (...) Պահ մը Թերզեան կը քաշուէր գրական միջավայրէն. քերթողը իր այդ բանաստեղծութեամբ, անոր քնարահար գրչին հրաւեր կը կարդար» (Երեմեան, 1913: 29-30):

1866 թ. Ե. Տեմիրճիպաշյանը՝ Մ. Չերազի հետ միասին, Ներսիսյանի ավագ կարգից փոխադրվում է այդ թվականին Հասցյուղում հիմնված Նուպար-Շահնազարյան վարժարան: Հետագայում Մխիթարյանների մեկ ուրիշ անվանի հայրերից գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ Մեսրոպ Ճանաշյանն այդ կապակցությամբ մտահոգություն է հայտնել, թե «Այս անցքը օգտակար չեղաւ իրեն, վասնզի կորսնցուց կարելիութիւնը ունենալու իբր կրթիչ եւ դաստիարակ-ուսուցիչ Թովմաս Թերզեանը, որ Ներսէսեանի մէջ կը դասաւանդէր եւ թերեւս կրնար հսկել անոր ընթերցումներուն վրայ: Մինչդեռ ան անցնելով միւս վարժարանը՝ կարդաց ձեռքը անցած այնպիսի վիպական եւ իմաստասիրական գիրքեր՝ որոնց ազդեցութիւնը վնասեց անոր մտաւորական կազմաւորման: Պատանեկան հասակէն կը զգացուի իր մտքին վրայ ազատախոհի ձգտումներ» (Ճանաշեան, 1973: 190): Այդուհանդերձ, նոր վարժարանում արդեն իսկ երևան են գալիս Եղիայի մանկավարժական հակումները: Նրա կենսագիրների հավաստմամբ՝ այստեղ նա, իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ, ոչ միայն սոսկ ուսանող էր, այլև «օգնական-ուսուցիչ կրտսեր կարգերու» (Ֆէնէրճեան Գ., Պետրոսեան Հր., Եղիա Տեմիրճիպաշեան, 1921: 11): Ըստ այդմ՝ բնական է, որ տարիներ անց՝ 1886 թվականին՝ Կեդրոնական վարժարանի բացումից շատ չանցած, Թովմաս Թերզեանն ու Եղիա Տեմիրճիպաշյանը՝ ուսուցիչն ու սանը, դառնում են նաև գործակիցներ: Ընդ որում, իր նախկին ուսուցչի նկատմամբ Եղիայի ունեցած մեծագույն ակնածանքի դրսևորման տեսակետից շատ բնորոշ է այդ ընթացքում տեղի ունեցած միջադեպերից մեկը: «Երկրագունտ» հանդեսի 1887 թվականի տարեվերջի համարներից մեկում գետեղած ծանուցման համաձայն՝ Կեդրոնականի հայ գրականության ուսուցիչ Ռ. Պերպերյանի հրաժարականից հետո, նրան ժամանակավորապես փոխարինել էր նույն վարժարանում ընդհանուր պատմություն դասավանդող Մ. Չերազը: Միաժամանակ, վարժարանի Խնամակալությունը Հայ գրականության ուսուցչի հաստիքն առաջարկել էր Եղիա Տեմիրճիպաշյանին: Վերջինս, սակայն, Մ. Չերազին գրած նամակներից մեկում այդ առաջարկը «քաղաքավարական» էր համարում, քանզի լսել էր (ի դեպ՝ «գոհութեամբ»), թե «Թովմաս Թերզեան առաջին

օրէն իբրեւ յաջորդ նշանակուած է Պերպերեանի»: Մ. Չերազը այդ պնդմանը զարմանքով հակադարձում է՝ «ո՞վ դարձնեց այդ ստութիւն»՝ հավաստելով, որ Խնամակալութեան «առաջին» և «միակ» ընտրելին Եղիա Տեմիրճիպաշյանն է: Եվ միայն եթէ նա «մերժէ վերջնապէս, Խնամակալութիւնն պիտի փնտռէ մի յաջորդ»: Ինչ վերաբերում է Թերգյանին, ապա, ըստ Մ. Չերազի, վերջինս «չ'ունի ժամանակ եւ ստեպ կը ստիպուի զանց առնուլ այն դասեր իսկ գորս ունի մեր վարժարանին մէջ»: Ուստի, առաջարկում է հանդիպել և ավելի հանգամանորէն ծանոթանալ գործին (Ե., 1887: 471):

Բանախոսը

1880-ական թվականները Ե. Տեմիրճիպաշյանի լրագրողական-հրապարակագրական բուռն տարիներն էին: 1883-1889 թթ. նա, երբեմն միաժամանակ, խմբագրում էր «Գրական և իմաստասիրական շարժում», «Երկրագունտ», «Տնտես», «Դար» հանդեսները: Դրանցում հանդես էր գալիս ազգային-հասարակական արդի կյանքի, նորագույն զարգացումների վերաբերյալ սուր ու բովանդակալից հրապարակագրական հոդվածներով, որոնցում մեծ տեղ ունէր նաև գրական-կրթական-մշակութային երևույթների գնահատությունը: Այդ ամենի մեջ Թովմաս Թերգյանի անձն ու գործը, բնականաբար, Եղիայի ուշադրության կենտրոնում էին: Նա չի թաքցնում իր հիացմունքը ոչ միայն Թերգյանի դասախոսությունների, այլև տարբեր միջոցառումների ժամանակ նրա ունեցած բանախոսությունների նկատմամբ: Ամենից բնորոշ օրինակներից մեկը 1888-ին Ասիական Ընկերութեան Լսարանում Թովմաս Թերգյանի բանախոսություններից մեկի մեկնաբանությունն է: Ամբողջ դահլիճը սրտատրոփ սպասման մեջ է: «Այլ ահա, ահա ցանկացեալն. երեւցաւ բեմին ոտքն և սկսան ծափահարութիւնք,- անթաքույց ոգևորությամբ արձանագրում է Եղիան,- սրտերը, մանաւանդ իգակա՛ն սրտերն սկսան տրոփել ի տես բանաստեղծին, որ երգած էր կինն, որ պիտի բանախօսէր կնոջ վրայ»: «Թովմաս Թերգեան սկսաւ բանախօսել,- գրում է Ե. Տեմիրճիպաշյանը:- Ունկնդիրք կը սպասէին թերևս թէ բանախօսութեան առաջին պարբերութեան մէջ իսկ պիտ' երեւէր կինն: Այլ *Թերգեան հասարակ բանախօս մը, հասարակ արուեստագէտ մը չէ* (ընդգծումը՝ Պ. Դ.): Իւր բանախօսութեան առարկայ եղող անիծեալ թէ օրհնեալ էակին բոլոր ճարտարութիւնն ունի՛: Ուստի սպասել, աղաչել տուաւ զինքը բաւական ժամանակ. հնութեան վրայ խօսեցաւ, Յունաստանի ու Հռոմի մէջ դեգերեցաւ ի խնդիր կնոջ. նոր ժամանակաց բոլոր գլխաւոր իմաստասէրներն հրաւիրեց որպէս զի կնոջ վրայ յայտնեն իրենց դատաստանն»: Խոստում, խոստում էր «մեծանուն բանախօսն», իսկ ունկնդիրներն անհամբեր սպասում էին իրենց հուզող հարցի

պատասխանին՝ «Բայց կինն՝ որպէս կը ճանաչես դու, կինն՝ որպէս կ'երագէիր դու իտալական այն պայծառագեղ երկնից ներքն, Պայրընին ու Շէլլին քնարաց արձագանքով թրթռուն այն նուագաւոր ալեաց վրայ՝ յորս յուշկապարիկը կը լողան ու նաեւ վարդագոյն ամպիկը, Հայկանոյշն երգող այն մեծ քերթողին թևոց տակ՝ ոյր Բենիամինն էիր, ա՛հ, ըսէ՛, ա՛հ, ներկայացուր մեզ, ո՛ր քանաստեղծ, քո՛ւ երագած, քո՛ւ գտած, քո՛ւ պաշտած կինդ...»: Ու վերջապէս ծայր է առնում իրոք որ ֆանտաստիկ տեսարանը՝ «Ունկնդրաց այն տենդալիր ու շիջանուտ անհամբերութեան առջեւ, *Սանդուխտի* հեղինակը *թելաքախեց թեթն իմն, և ահա թի՛ն առաւ քանաստեղծն*: Սկսան, կամ մանաւանդ վերսկսան ծափահարութիւնք. ևս քան զնս սաստկացան ծափահարութիւնք: *Օղանաւու մը պէս, ոչ, օղոց թագաւորին նման կը բարձրանար Թերզեան* (ընդգծումները՝ Պ. Դ.)»: Եվ այլևս ամենևին պատահական չի հնչում, երբ Եղիան այդ քանախոսությունը որակում է իբրև «գրական երաժշտութիւն» (Ե., 1888: 101-102):

Ասիական Ընկերության մեկ այլ լսարանում Մատաթիա Գարագաշյանի սպասվող ճառի բովանդակությունն անակնկալ էր հանդիսականներին բազմության համար, և «շատեր կը հարցնէին ինքնին թէ ինչ պիտի խօսէր, (...) ի՞նչպէս պիտի խօսէր արդեօք, (...) եւ թէ ո՞վ էր այն «Հայ քանաստեղծն», ոյր վրայ պիտի բանախօսէր»: Ու մեծ մասը համոզված էր, որ հենց Թերզյանը պիտի լինէր նա: «Ոմանց աչքերն ունկնդրի մը վրայ կը թառէին,- գրում է Եղիան,- որ մեծին Բագրատունոյ Բենիամինն եղած էր, որ *Ռաֆայէլեան վարժարանի փառքն էր*, որ քանաստեղծ էր դիմօք՝ որպէս *քանաստեղծ էր սրտով ու հանճարով* (ընդգծումները՝ Պ. Դ.)»: Բայց նաև՝ «Թովմաս Թերզեանէն՝ հանդիսականաց աչքերն աւելի հեռուն կ'երթային, ի Վենետիկ, ի վանս Ս. Ղազարու, ի խուցն առանձնակ՝ յորում Աստուծոյ եւ իր հանճարոյն հետ կ'ապրի վսեմափառն Ալիշան»: Այսինքն՝ դեպի Ուսուցիչը՝ մի էության մեջ խտացնելով, ասես, մեծագոյն Ուսուցչի և Սանի խորքային էությունները (Ե., 1887: 169-170):

Ընդ որում, Թովմաս Թերզյանի քանախոսությունները բազմաբնույթ էին՝ ընդգրկելով ազգային կյանքի, գրականության, արվեստի, մշակույթի տարբեր բնագավառներ: 1988-ին Կ. Պոլսի բեմում շեքսպիրյան Օթելլոյի ադամյանական նշանավոր դերակատարումը շատերի հետ միասին հիացրել էր նաև Թ. Թերզյանին: Նկարագրելով և գնահատելով այդ դրվագը՝ Ե. Տեմիրճիպաշյանը միաժամանակ նրա մասին խոսում է «գրական հմտութեամբք առլցեալ գլուխ, յոգներան հմայեակ յիշատակօք յարատրոփ սիրտ, գեղեցկատենչ հոգի» որակումներով (Ե., Աղամեան, 1888: 476):

Բանաստեղծը

Եղիա Տեմիրճիպաշյանը, իր և նոր եկող սերնդի գրականության քննությունն սկսելով հայ բանաստեղծության զարգացման տվյալ փուլի գնահատությունից, այն տեսակետն է հայտնում, որ գրականության զարգացումը, ըստ էության, ուղղագիծ ընթացք չէ: «Գրականութիւնն՝ նման գեղարուեստից՝ այլեւայլ շրջաններէ կ'անցնի յընթացս իւր զարգացման», գրում է նա, և կարող է պատահել, որ նույնիսկ այդ «այլեւայլ շրջանաց միջեւ կամ շրջանաց մէջտեղ իսկ խաւարի, իբր ընդհատի»: Այդ երևույթը, նրա կարծիքով, բնորոշ էր նաև արդի հայ բանաստեղծությանը, երբ մի շարք հեղինակներ ստվար ժողովածուներ լույս ընծայելուց հետո, «ոչ միայն այլ եւս չհրատարակեցին, այլ եւ «քնարն իսկ թողուցին»: Միայն Թովմաս Թերգյանն ու նրա սերնդակից Մկրտիչ Աճեմյանն էին, որ իրենց նոր քերթվածներով «մերթ ընդ մերթ» երևում էին գրական ասպարեզում: Ընդ որում՝ առաջինը, որովհետև «*ի Մուսայից յաւէտ կը փայփայուի յաւերժական իւր երիտասարդութեան համար*» (ընդգծումը՝ Պ. Դ.), իսկ երկրորդը, որովհետև «մանկական շնորհ մը՝ որ Աճեմեանի երկնաշնորհ ձիրքն է՝ կուգայ իր մատաղ անդամոց դողդոջիւնն յածել քնարին վրայ» (Ե., Սփոփանք ռամկին, 1888: 469-470):

Պատահական չէր նաև, որ Ե. Տեմիրճիպաշյանն իր խմբագրած «Երկրագունտ» հանդեսում տեղ էր տվել «Կարնոյ Գեր. Առաջնորդ» Մաղաքիա Օրմանյանի՝ «Արեւելք»-ի 1886 թ. 3-րդ համարում տպագրած մի նամակի կապակցությամբ Ռ. Պերպերյանի պատասխանին: Վերջինս անընդունելի էր համարում Օրմանյանի այն տեսակետը, թե պետք է «... նոր ժամանակաց հայ գրականութեան բանաստեղծական արտադրութեանց մէջ միայն Աղեքսանդր Փանոսեանի քերթուածներն համարել անձանձրոյթ ընթեռնիլ»: «Չգիտեմք թէ Գեր. Օրմանեանի համար «նոր ժամանակներն» ո՞ւստի կ'սկսին,- հարցնում է Ռ. Պերպերյանը,- թէ արդեօք նոյն ինքն զԱլիշան, զՊէշիկթաշլեան, զԳամառ-Քաթիպա, զԴուրեան, զՆար-Պէյ, զԹերգեան կը գրկէ՞ կը պարուրէ՞ իւր անողոք արհամարհանաց լայն թելերուն մէջ, թէ ոչ աւելի անձուկ միջոց մը կը բացատրէ այդ բառ»: Ապա հետևում է եզրակացությունը. «Կը ցաւինք իւր ճաշակին վրայ եթէ ապաքէն ձանձիր կ'ազդեն իւրեան բանաստեղծքն գորս թուեցինք»: Այդ պատասխանում անդրադարձ կար նաև Ե. Տեմիրճիպաշյանի ու նրա սերնդակիցների վերաբերյալ: «Իսկ եթէ կ'ակնարկէ միայն նորագոյն քերթողներն, Յովհաննէս Սէթեանը, Եղիա Տեմիրճիպաշեանը, Արմէն Լուսինեանը,- շարունակում է Ռ. Պերպերյանը,- այն ատեն դարձեալ կը ցաւիմք իւր վրայ, զի անկարող է հասկնալ առաջին երկուքին երազուն ու մելամաղձիկ մուսայն, վերջնոյն երեւակայութեան ճոխութիւնը» (Պ. Ռ. Յ., 1886: 181-182):

Ընդհանրապես բանաստեղծությունը բաժանելով *անձնականի* ու *անանձնականի*՝ Եղիա Տեմիրճիպաշյանը, Հայոց մեջ թվարկելով «անանձնականության» նշանավոր արտահայտիչներին, Ա. Բագրատունու, Հ. Ոսկանի, Ս. Հեքիմյանի, Ռ. Պերպերյանի, Տ. Չրաքյանի և մի քանի այլոց շարքում, նշում է նաև Թովմաս Թերգյանին: Ընդ որում, ըստ նրա, վերջինս որպես կապող օղակ, «ատեն ատեն (...) կու գայ մեջտեղ մտնել Ալիշանին ու Դուրեանին, երբ սերն յաղթահարած է իր արուեստագետի հզոր կամքն, երբ ցնորքն իր շուրջ կը պտտոցնէ մահուն գրեթէ թանձրացեալ ստուերներ»: Ավելին՝ Թ. Թերգյանը «Նորերուն ալ առաջիններէն հանդիսացաւ իրապաշտ քանի մը հատուածներով» (Հուր Հայրան, 1899: 247-248):

Իր խմբագրած հանդեսներում ժամանակ առ ժամանակ տպագրելով Թովմաս Թերգյանի բանաստեղծությունները՝ Ե. Տեմիրճիպաշյանը առիթը բաց չէր թողնում սիրելի ուսուցչի ու բանաստեղծի վերաբերյալ իր գնահատականները հնչեցնելու համար: Այդպես, ներկայացնելով «Առ մայրն իմ» քերթվածը՝ իր նախաբան խոսքում նրան «ազգային բանաստեղծ», «մեծանուն քերթող» է անվանում: Գոհունակությամբ հայտնելով, որ նա «Երկրագունտ»-ին է հղել հիշյալ բանաստեղծությունը՝ նշում է, որ նրանում «երիտասարդական աւիւնն ու մեծութեան տենչն՝ ընթերցողին հոգւոյն կը փոխանցին բանաստեղծին հոգիէն եւ զայն կ'ելէկտրականացնեն...» (Թերգեան, 1885: 492):

Մեկ այլ տեղ իր ծածկանուններից մեկի՝ Մելանիայի միջոցով հայտարարում է, թե «Թովմաս Թերգեան կը ստեղծէ գիտական բանաստեղծութիւնն» (Մելանիա, 1886, 84):

1887 թ. ավարտին՝ ընթերցողներին ուղղված խմբագրականում անդրադառնալով «Երկրագունտ»-ի անցած ճանապարհի գնահատությանը՝ Ե. Տեմիրճիպաշյանը նշում է, որ ներկայում հանդեսը «նս քան զնս կարելոր դիրք մը կ'ստանայ Հայ մամլոյն մէջ»: Ընդ որում՝ նման հաջողությունը պայմանավորվում էր նաև նրանով, որ «Իր աշխատակիցներու դասուն մէջ կը գտնուին Վեննական դպրոցին ամենամեծ հեղինակը՝ Տ. Մատաթիա Գարագաշեան, Վենետկոյ դպրոցին ամենափայլուն ներկայացուցիչը՝ Թովմաս Թերգեան (ընդգծում՝ Պ. Դ.), Բարիզեան դպրոցին ամենապերճ անդամը՝ Կարապետ Էֆենտի Գարագաշ, Արարատեան դպրոցին ամենահմուտ գրիչը՝ Մարկոս Աղաբեգեանց, Պօլսոյ դպրոցին երկու ծաղիկները՝ Ռեթեոս Պերպերեան և Մինաս Չերազ» (Խմբ. «Առ ընթերցողս», 1887: 543):

Թովմաս Թերգյանն ու Եղիա Տեմիրճիպաշյանը, ինչպես տեսանք վերը բերված ձոնի օրինակով, միմյանց հետ հաղորդակցվում էին նաև չա-

փածո խոսքի միջոցով: 1885-ին Թերզյանի բարձրագույն պարզևի արժանանալու առթիվ գրված ձոնը, բնականաբար, աչքի էր ընկնում դրական շեշտադրումներով: Մի քանի տարի անց՝ ումն Ֆուատ պեյի մահվան կապակցությամբ, Ե. Տեմիրճիպաշյանի գրած բանաստեղծությունն արդեն լի էր հոռետեսական տրամադրություններով: Այդ կապակցությամբ Թերզյանը հենց Եղիայի խմբագրած «Գրական եւ Իմաստասիրական Շարժում» (ԳԻՇ) հանդեսում տպագրում է մի քերթված՝ նախկին սանի նկատմամբ իր վերաբերմունքն արտահայտող ձոնով՝ «Առ ազնիւ եւ սիրելի Ե. Էֆենտի Տեմիրճիպաշեան»: Գրվածքը բացվում էր ուսուցչի անկեղծ մտահոգության և տարակուսանքի տողերով.

... Ինչո՞ւ նայուածքդ անձկոտ 'վ հող խոնարհես
Ով դու գոյր աչս երկնահայեաց հաստեց Տէր.
Քեզ ի՞նչ հրապոյր կ'ընծայեն խորք անդնդոց
Որ գլխիկոր հոն նայելով կաս յեզեր...

Թերզյանն, իհարկե, հասկանում էր, որ «մութ եւ պաղ» կյանքի անարդարություններն ու անօրինություններն էին պատճառը նման հուսահատության: Բայց... նա նաև չի խրախուսում պայքարից հրաժարվելու, «Վշտաչարչար յառաջընթաց վեհազանց// Յարիագոյն ախոյենէն իւր գրկելու», «Մեռնի լ... մոռնալ ու լռելու», «մահուան սեւ քողով ծածկելով գլուխն»՝ «ի վիհ խոր» առանձնանալու տրամադրությունները: Ընդհակառակը՝ փորձում է հուսադրել ու մղել ավելի լավատեսության.

... Քո ալ դէմքէդ թող շիկնին թերթք վարդերու
Թէեւ փրշերն 'վ խոր քո սիրտդ խոցեն.
Եւ մոլեգնեալ վըրադ խուժող հրոսներու

Արտասուալից աչքերդ գերկին ցուցընեն (Թերզյան, ԳԻՇ, 1887: 49-50):

Մի քանի օր անց՝ ապրիլի 11-ին, «Մասիս»-ում լույս է տեսնում Ե. Տեմիրճիպաշյանի «Փռշի» վերնագրով ծավալուն բանաստեղծությունը՝ «Առ Թովմաս Թերզեան» ձոնով և «Ի պատասխան իւր բանաստեղծութեան՝ հրապարակեալ ի Մարտ ամսաթիւ “Գրական և Իմաստասիրական Շարժում”ի» ծանոթագրմամբ (Տեմիրճիպաշեան, 1887: 110-111): Փորձելով պարզաբանել գրվածքի վերնագիրը՝ Եղիան գրում է, որ՝ դեռ պատանի, անսահման երկնքի հայեցության առջև իրեն տանջել է Հարցը, թե «Զի՞նչ է փռշին»: Եվ իրական է թվացել պատասխանը՝ «ո՞չ տիեզերքն է անի...»: Չէ՞ որ անծայրածիր տիեզերքում ամեն բան՝ բնության հրաշալի երևույթները՝ ծիածանի գույներն ու երանգները, բոլոր մարմինները՝ նույնիսկ «բոլոր թելեր, լանջք կուսին»՝ «Զի՞նչ են դոքա.- նյութ: Եւ լիցին զի՞նչ - փռշի»: Մինչև անգամ խնկելի տաճարներն ու «հոգւոյն հուր ուխտիւք» օծյալ աղօթավայրերը պարզապես «մարմար կամ ազնիւ փայտ», շքեղ «արուես-

տի գործ» են իր աչքում: Եվ քանի որ Թերզյանն իրեն համեմատել էր կյանքին վերջ տված Ֆուատի հետ՝ «Այսպես եւ նա, երիտասարդն տրտմայուշ, // Ձոր կորուսինք այնքա՛ն, ո՛հ, վաղ, *գոր ինծի* // *Համեմատես – եւ իրաւամբ – ո՛ր Թերզեան*» (ընդգծումը՝ Պ. Դ.), փորձում է բացատրել, որ, ի վերջո, իր նման է մտածել նաև տարաբախտ երիտասարդը: Ու թէն՝ «Թերեւս եմ սուրբ ես՝ մօտ Իսլամ պատանւոյն, // Գինւոյ, կընոջ գերեցեալն այն Ֆուատայ: // Այլ մտածումն նոյն՝ առնէ զմեզ նոյն և մի»: Քերթվածի ավարտը, սակայն, բնորոշվում է սիրելի ուսուցչի ու բանաստեղծի նկատմամբ Եղիայի ակնածալից վերաբերմունքի, երախտագիտական զգացմունքի ընդգծմամբ.

... Ըզտեալական, գորմէ, վարպէ՛տ պաշտեցեալ,
Ի վըսեմ դասս ինձ խօսէիր էր երբեմն,
Ըզտեալական ոչ գըտանել յուսամ ա՛յլ.
Կամ մանաւանդ կորուսի զայն, վա՛հ, անդարձ...

Վերջապես, Ազատախոհյան ծածկանունով հրատարակած փիլիսոփայական բառարանում Եղիա Տեմիրճիպաշյանը, ներկայացրել է Թովմաս Թերզյանի անձի և գործի իր ամբողջական գնահատականը. «Վենետկցոց Բենիամինն, Վենետկցոց Քերովբէիկն, կրնայ ըսուիլ որ հարիւր բերան ունի դիցաբանութեան Համբաւոյն նման: Արդարև չը կայ վարժարան ուր չը դասախօսէ նա, չը կայ լսարան ուր չբանախօսէ: Առասպելն Հսկայ մ'ալ կը յիշատակէ, երկնի և երկրի որդի, որ աշխարհ կ'ընդգրկէր իր հարիւր բազուկներով: Ո՞չ ապաքէն գրականութեան հսկայ մ'ալ կրնայ կոչուիլ մեր բազմաբերան բանախօսն: Արձակ թէ ոտանաւոր, ողբերգութիւն թէ կատակերգութիւն, դիւցազներգութիւն թէ հովվերգութիւն, հոգեբանութիւն թէ բնալուծութիւն, քերական թէ արուեստ քերթողական, աղօթագիրք թէ բառագիրք, ամէն նիւթի վրայ, ամէն լեզուով և ամէն ոճով, այո՛, կարող է գրել Թերզեան ամէն օր» (Ազատախոհեան, 1879: 41-42):

Թովմաս Թերզյանի անձի և ստեղծագործության նկատմամբ Եղիա Տեմիրճիպաշյանի դրսևորած ակնածալից վերաբերմունքն ու բարձր գնահատականները, բնականաբար, չէին կարող չնկատվել գրական ասպարեզի մասնակիցների կողմից: Գրող, հրապարակագիր Ռոտովֆ Սամիկյանը (Տումինո) Թ. Թերզյանի մահվան կապակցությամբ գրած իր խոսքում, մեջբերելով Փիլիսոփայական բառարանի վերը հիշատակված հատվածը, գրում է. «Տեմիրճիպաշեանի այս հիացական տողերը, այնքան արժանօրէն նուիրուած, կը բաւեն Թերզեանը փառաւորելու իբր հանճարեղ և հզօր երևակայութեան տէր բանաստեղծ» (Սամիկեան: 1909: 135-136): Նա նույնիսկ երանի է տալիս Եղիային, «որ այնքան ճշմարիտ կերպով գնահատած է Թերզեանը, թերեւս հիմնուելով ճօն Քից անգղիացի մեծանուն բա-

նաստեղծին սա հատուածին վրայ.- «Գեղեցիկն է ճշմարիտ և ճշմարիտն է գեղեցիկ. այսքան ահա գիտենք կեանքի մէջ և այսքան բաւ է մեզ գիտնալ»» (Սամիկեան, 1909: 139):

Գրականության ցանկ

1. **Ազատախոհեան**, Փիլիսոփայական բառարան ժողովրդական (Նախափորձ), Կ. Պօլիս, տպագր., Արամեան, 1879, 53 էջ:
2. **Գրասէր Ատոմ**, Առ թովմաս էֆէնտի Թերգեան, «Երկրագունտ», 1885, թիւ 7, էջ 332-333:
3. **Երեմեան Ս.**, «Եղիա Տէմիրճիպաշեան», Ազգային դէմքեր (Գրագէտ հայեր), չորրորդ շարք, Վենետիկ, 1913, 622 էջ:
4. **Ե.**, Նամականի, «Երկրագունտ», 1887, թիւ 11-12, էջ 469-472:
5. **Ե.**, Լսարան Ասիական Ընկերութեան (Ընդ բարձր հովանավորութեամբ Վսեմաշուք Տիկին Տիսաբ Փաշայի), «Երկրագունտ», 1888, թիւ 3-4, էջ 97-106:
6. **Ե.**, Լսարան Ասիական Ընկերութեան (Ընդ բարձր հովանավորութեամբ Վսեմաշուք Տիկին Տիսաբ Փաշայի), 1887, թիւ 5-6, էջ 161-173:
7. **Ե.**, Սփոփանք ռամկին (Առ մեծապատիւ Միհրան էֆէնտի Հովհաննէսեան), «Երկրագունտ», 1888, թիւ 10, էջ 468-474:
8. **Ե.**, Աղամեան, «Երկրագունտ», 1888, թիւ 10, էջ 475-478:
9. **Թերգեան Թ.**, Առ ազնիւ եւ սիրելի Ե. Էֆէնտի Տէմիրճիպաշեան, ԳԻՇ, 1887, Տետր երրորդ, էջ 49-50:
10. **Թերգեան Թ.**, Առ մայրն իմ, «Երկրագունտ», 1885, թիւ 11, էջ 492-494:
11. **Թերգեան Թ.**, Առ ազնիւ եւ սիրելի Ե. Էֆէնտի Տէմիրճիպաշեան, ԳԻՇ, 1887, Տետր երրորդ, էջ 49-50:
12. **Խմբ.** Առ ընթերցողս, «Երկրագունտ», 1887, թիւ 11-12, էջ 543-544:
13. **Հուր Հայրան**, Անձնական եւ անանձն բանաստեղծութիւն, «Մասիս», 1899, թիւ 8-9, էջ 247-249:
14. **Ճանաչեան Մ.**, Հայ գրականութեան նոր շրջանի համառօտ պատմութիւն (1701-1920), Վենետիկ-Ս.Ղազար, 1973, 401 էջ:
15. **Մելանիա**, Աղջկան մը օրագիրն, «Երկրագունտ», 1886, թիւ 2, էջ 80-88:
16. **Պ.Ռ.Յ.**, Գէր. Օրմանեանի նամակն, «Երկրագունտ», 1886, թիւ 4, էջ 178-186:
17. **Տէմիրճիպաշեան Ե.**, Փռչի (Առ թովմաս Թերգեան), «Մասիս», 1887, թիւ 3868 (Ապրիլ 11), էջ 110-111:
18. **Ֆէնէրճեան Գ., Պետրոսեան Հր.**, Եղիա Տէմիրճիպաշեան (Իր կեանքը եւ Իր գործը), Կ. Պոլիս, 1921, 207 էջ:

References

1. **Azataxohean**, P'ilisop'ayakan bararan žoğovrdakan (Naxap'orj), K.Pòlis, tpagr., Aramean, 1879, -53 ēj (in Armenian):
2. **Grasēr Atom**, Ar T'ovmas ēfēnti T'ērcean, «Erkragownt», 1885, t'iw 7, ēj 332-333 (in Armenian):

3. **Eremean S.**, «Egia Tēmirčipašean», Azgayin dēmk'er (Gragēt hayer), čorrord šark', Venetik, 1913,- 622 ēj (in Armenean):
4. **E.**, Namakani, «Erkragownt», 1887, t'iw 11-12, ēj 469-472 (in Armenean):
5. **E.**, Lsaran Asiakan Ėnkerowt'ean (Ėnd barjr hovanavorowt'eamb Vsemašowk' Tikin Tiwsab P'ašayi), «Erkragownt», 1888, t'iv 3-4, ēj 97-106 (in Armenean):
6. **E.**, Lsaran Asiakan Ėnkerowt'ean (Ėnd barjr hovanavorowt'eamb Vsemašowk' Tikin Tiwsab P'ašayi), 1887, t'iw 5-6, ēj 161-173 (in Armenean):
7. **E.**, Sp'op'ank' řamkin (Ař mečapatiw Mihran ēfēnti Hovhannēsean), «Erkragownt», 1888, t'iw 10, ēj 468-474 (in Armenean):
8. **E. Adamean**, «Erkragownt», 1888, t'iw 10, ēj 475-478 (in Armenean):
9. **T'ērzean T'.**, Ař azniw ew sireli E. Ėfēnti Tēmirčipašean, GIŠ, 1887, Tetr errorđ, ēj 49-50 (in Armenean):
10. **T'ērzean T'.**, Ař mayrn im, «Erkragownt», 1885, t'iw 11, ēj 492-494 (in Armenean):
11. **T'ērzean T'.**, Ař azniw ew sireli E. Ėfēnti Tēmirčipašean, GIŠ, 1887, Tetr errorđ, ēj 49-50 (in Armenean):
12. **Xmb.** Ař ėnt'erc'ògs, «Erkragownt», 1887, t'iw 11-12, ēj 543-544 (in Armenean):
13. **Howr Hayran**, Anjnakan ew ananjn banastegčowt'iwn, «Masis», 1899, t'iw 8-9, ēj 247-249 (in Armenean):
14. **Čanašean M.**, Hay grakanowt'ean nor šřjani hamařòt patmowt'iwn (1701-1920), Venetik-S.Ġazar, 1973,- 401 ēj (in Armenean):
15. **Melania**, Aġjkan mẽ òragirn, «Erkragownt», 1886, t'iw 2, ēj 80-88 (in Armenean):
16. **P.Ř.Y.**, Ger. Ėrmaneani namakn, «Erkragownt», 1886, t'iw 4, ēj 178-186 (in Armenean):
17. **Tēmirčipašean E.**, P'oši (Ař T'ovmas T'ērzean), «Masis», 1887, t'iw 3868 (April 11), ēj 110-111 (in Armenean):
18. **Fēnērčean G., Petrosean Hr.**, Egia Tēmirčipašean (Ir keank'ē ew Ir gorčē), K. Polis, 1921,- 207 ēj (in Armenean):

Պետրոս Դեմիրճյան – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ նոր գրականության բաժնի առաջատար գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ դասական և ժամանակակից գրականություն: Հեղինակ է 4 մենագրության, բազմաթիվ գրականագիտական և գրաքննադատական հոդվածների:

ORCID ID: 0009-0003-6265-142
pdemirchyan@mail.ru

Petros Demirchyan – Doctor of Philological Sciences. Executive Secretary at Writers' Union of Armenia, Senior Researcher at the Department of Modern Armenian Literature of the NAS RA Institute of Literature after M. Abeghian. Scientific interests: classical and modern literature. Author of 4 monographs, numerous literary, literary-critical articles.

ORCID ID: 0009-0003-6265-142
pdemirchyan@mail.ru

Петрос Демирчян – д. филол. н., секретарь правления Союза писателей Армении, старший научный сотрудник отдела новой армянской литературы Инсти-

тута литературы им. М. Абегяна НАН РА. Научные интересы: классическая и современная литература. Автор 4-х монографий, многочисленных литературоведческих и литературно-критических статей.

ORCID ID: 0009-0003-6265-142

pdemirchyan@mail.ru